ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀՀ-ՍՄԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/06>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

11 ապրիլ 2022թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան
անդամներ՝ Հասմիկ Ղոնյան, Արմինե Աբրահամյան
քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/06>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

1.Տեղեկատվություն՝ գնման առարկայի՝ գնման հայտով նախատեսված գնի վերաբերյալ

Չափաբաժին 1՝ Ասբոշիֆեր՝ 185016 ՀՀ դրամ,
Չափաբաժին 2՝ Տախտակ՝ 1200000 ՀՀ դրամ,
Չափաբաժին 3՝ Ամրան մետաղական՝ 28000 ՀՀ դրամ,
Չափաբաժին 4՝ Անկյունակ մետաղական՝ 28080 ՀՀ դրամ

2.Տեղեկատվություն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվելու և հայտերի բացման մասին

2.1. Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2022թ. ապրիլի 7-ը, ժամը՝ 14:00-ն: Հայտերը ներկայացվել են www.e-auction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

2.2.Էլեկտրոնային աճուրդը/հակադարձ աճուրդը/ սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ 2022թ. ապրիլի 8-ին, ժամը՝ 14:00-ին:

3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ*

h/h	Մասնակցի անվանումը /անունը/	Էլ. հասցեն
1	<<Ջուզեպպե>> ՍՊԸ	Guiseppemalimenti@yandex.com

*Գնման ընթացակարգին հայտ է ներկայացվել միայն 2-րդ չափաբաժնի մասով:

4. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ չեն ներկայացվել :

5. Տեղեկատվություն՝ հրավերի և հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ www.e-auction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն՝ մասնակիցների գնային առաջարկների և հակադարձ աճուրդի վերաբերյալ
/ՀՀ դրամ/

Հ/Հ	Գնման առարկան	Մասնակից	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջնական տարբերակ			Մասնակցի
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	Հբաղեցրած տեղը
2	Տախտակ	<<Ջուզեպպե>> ՍՊԸ	1200000	1000000	20%	1200000	990000	20%	1188000	1

7.Տեղեկատվություն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված նվազագույն պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Գնահատող հանձնաժողովի անդամները հայտի գնահատման ընթացքում արձանագրել են, որ գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ՝

1. Դիմում-Հայտարարություն Հավելված 1-ում նշված է՝ Սխալ ծածկագիր, Սխալ պատվիրատու, Սխալ չափաբաժիններ /նշված է 1,2 չափաբաժիններ, սակայն մասնակցել է 2-րդ չափաբաժնին/, Գործունեության հասցեն կիսատ է՝ նշված չէ մարզը, քաղաքը, բնակավայրը, Ստորագրության հատվածում նշված չէ տնօրենի պաշտոնը: Միաժամանակ, փաստաթուղթը անհրաժեշտ է ստորագրել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. Բացակայում է մասնակցի իրական շահառուների տվյալների մասին Հավելվածը 1.2-ը:

3. Ապրանքի ամբողջական նկարագիրը լրացված չէ և չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝

ա/ 1 աշխատանքային օրով կասեցվել է հայտերի բացման-գնահատման նիստը և ծանուցվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու անհամապատասխանությունը,

Հիմք՝ ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետ:

բ/ Հաձնաժողովի հաջորդ նիստի օր է նշանակվել 2022թ. Ապրիլի 13-ին, ժամը 14:00-ին:

8.Տեղեկատվություն՝ հայտերի բացման-գնահատման նիստի շարունակության մասին
Ք. Կապան **13 ապրիլ 2022թ., ժամը 14:00**

8.1.Ընդունվել է ի գիտություն, որ՝

- առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված ժամկետում www.e-auction.armeps.am էլեկտրոնային համակարգով ներկայացվել է անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերի փաթեթը,
- հաշվի առնելով, որ <<Ջուզեպպե>> ՍՊԸ-ն 2022թ. ապրիլի 6-ից ներառվել է Գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, կատարվել է հարցում ՀՀ ՖՆ՝ մասնակցի կողմից հայտի ներկայացման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով.
- հայտերի գնահատումը շարունակվել է և հաջորդ նիստը հրավիրվել է 2022թ. ապրիլի 21-ին, ժամը 16:00-ին:

9.Տեղեկատվություն՝ հայտերի բացման-գնահատման նիստի շարունակության մասին
Ք. Կապան **21 ապրիլ 2022թ., ժամը 16:00**

9.1.Ընդունվել է ի գիտություն, որ՝

-ստացվել է ՀՀ ՖՆ պարզաբանումն այն մասին, որ <<Ջուզեպպե>> ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվել է 2022թ. ապրիլի 5-ին:

-գնահատող հանձնաժողովի կողմից հրավերով սահմանված նվազագույն պահանջների նկատմամբ մասնակցի ներկայացրած հայտի համապատասխանությունը գնահատվել է հետևյալ կերպ՝

հ/հ	Մասնակցի անվանումը /անունը/	Հրավերով սահմանված նվազագույն պահանջները	
		Պիտանելիության չափորոշիչ	Ֆինանսական չափորոշիչ
1	<<Ջուզեպպե>> ՍՊԸ	Չի համապատասխանում*	Համապատասխանում է

*Հիմք՝ <<Ջուզեպպե>> ՍՊԸ կողմից սխալով է շտկվել արձանագրված <<նշվել է սխալ չափաբաժիններ /նշված է 1,2 չափաբաժիններ, սակայն մասնակցել է 2-րդ չափաբաժնին/>> կետը, անհամապատասխանությունների շտկման դիմում-հայտարարության մեջ նշվել է <<1-4(բոլոր) չափաբաժիններ>>, միաժամանակ լիազորագիրը կնքված չէ մասնակցի կողմից և փաստաթղթից պարզ չէ, մասնակիցը կնիք ունի, թե ոչ, արձանագրված մյուս անհամապատասխանությունների շտկումը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

(Լրացում՝ Անհամապատասխանությունը սխալ շտկված լինելու վերաբերյալ հարցմանը մասնակցի կողմից ստացվել է պատասխան՝ <<կարող եք հայտը մերժել>>):

9.2.Հանձնաժողովը որոշեց՝

9.2.1.հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<***Ջուզեպպե>> ՍՊԸ*** կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար,

9.2.2.գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով,

9.2.3.գնման գործընթացը շարունակել Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ---------- Ա. Սարգսյան

անդամներ ---------- Հ. Ղոնյան

---------- Ա. Աբրահամյան

քարտուղար ---------- Լ. Ավետիսյան